



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը տարիներ առաջ սկսել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրաց ցուցակի հրատարակությունը: Մական 1944 թվի առաջին համարում մեկ ձեռագրի նկարագրությունը լույս տեսնելուց հետո, խմբագրությունից անկախ պատճառով, ցուցակը թերի մնաց: Այժմ, երբ Մայր Հայրենիքի և Միջուտքի թեմերից բավականաչափ նվեր ձեռագրեր են ստացված Մայր Աթոռում, հայազեաների լայն շրջանի օգտագործմանը համար դյուրություն ստեղծելու նպատակով, անհետաձգելի խնդիր է դառել նրանց ցուցակի հրատարակությունը:

Նման ցուցակի հրատարակությունը անհրաժեշտ է և այն տեսակետից, որ լուրաբանչուր նվիրատու ի վիճակի կլինի իրազեկ դառնալ իր ուղարկած ձեռագրերը Մայր Աթոռում ստացվելու մասին և, մյուս կողմից, խրախուսել օրինակ կհանդիսանա ձեռագրի ունեցող մեր հայրենակիցների համար՝ կորստից և փշացումից փրկելու Համար իրենց ձեռագրերը ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր ամենից ապահով վայրն է խնամքով պահելու մեր գրասեր պապերից մեզ մնացած նվիրական հիշատակները:

№ 1

ԳՆԱԶԱՐԱՆ

Թերթերը՝ 303.—Պրակները՝ 22, լուրաբանչուրը, միջին հաշվով, 12 թերթից: Մեծուրյունը՝ 24×18×6,3,— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ՝ դրոշմված գծազարդերով: Ներսից փակցրված է կարմրագույն տպած կտավ:— Վիճակը՝ սկզբից և վերջից թերի է, պրակները կազմելու ժամանակ խառնված են: Կան ցեցակեր թերթեր, որոնց մի մասը նորոգված է:—Գրությունը՝ միա-

սյուն.—Տղերը՝ միջին հաշվով 42:—Գիրը՝ խոշոր բոլորագիր:—Ձաղագրեր՝ կան թռչնագրեր: Վերնագրերը միշտ կարմիր թանաքով:—Ժամանակը՝ ՋԼԵ (1486 թ.):—Գրիչը՝ Հովսեփ:—Կազմողը՝ Անանիա:—Տեղը՝ Ագոզիսի Աստվածածին վանքում (52բ, 301ա):

Սկզբից թերի. սկսում է կրորդ պրակից.

«... Ռամիք վերածեր,
Ընկալ զերգս բարի,
Ռաբուն հաւաքեալ,
Ռամեալ բոլորիա,
Ռամք քեզ ժողովեա,
Լոյս մեզ առաքեա...»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 52բ.—Բարեխաւսութեամբ սրբոյն Սարգսի զարավարին և ամենայն սրբոց նահատակութեամբ, որ աստ կան հաւաքեալ, ողորմեալ Տէր գծողի սորալ Յովսեփի:

Թ. 302ա.—Փառք արարչին ամենաջնի, Եւ գովութիւն ամէն յեզուի.
Հոգի Սուրբ Տէրն ամենի,
Լիցի պահող տէր Յովսեփի,
Պարզեք առտ ի սա հեղցի,
Եւ անիորձ պահէ գոալ աշխարհի,
Զգրող յայս դանձարանի:

Թ. 301ա—302ա.— Փառք ամենայնսուրբ Երրորդութեանն... Որ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղսասէր և խամար անձին Յովսեփի լոկ անամբ արեղալի հասանել յաւարտ այսրմ գանձարանի յամի ՋԼԵ (1486 թ.) թրվականի մերումս տումարի: Որ գրեցաւ ի վանքս Ագոզեաց բնդ հովանեաւ ամէնաւրհնեալ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Թումայ Առաքելոյս առ ոտս երջանիկ և փառաւոր հարս և հայրապետիս մերոյ Տէր Ազարիին: Աստուած բնդ երկայն աւուրս պահէ, ամէն: Այլ և զմիարսնրս վանաց՝

զՏէր Բարսեղ հայրաչգլուի եղբայրն իմ եւ դասավար վանացս, զՏէր Հայրապետն՝ ամենայն բանի հոգաստար, զՏէր Շմատունն՝ հայր պետ վանացս, զՏէր Անանիայ՝ քաջ գրագիր եւ կազմող, զՏէր Յովանէս եւ զԻւր աշակերտն Փիլիպոս, սաղմոսերգողքն՝ զՏէր Թադէոս Դեխայն, որ անոշահամ գինով զմեզ ճաշակեաց, զՏէր Յակոբն, երախտաւոր վանացս, զՏէր Դանիէլ՝ փակակարն: Քրիստոս Աստուած զսոսայ ի խորին ծերութիւն հաստացէ, որ շատ աւփնականութեամբ սպասաւորեցին մեզ եւ կերակրեցին ամենայն բարութեամբ: Եւ զայլ աշխատաւորք վանացս՝ զտնտես Պապն, զՄուրբրի Աբրահամն եւ զայլսն. Աստուած նոցա աշխատանացն վարձս հատուցանէ, ամէն:

Զստացող գանձարանիս զՏիրանանց, որ ստացաւ զսա յիշատակ իւր եւ ծնաւոյց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորացն՝ զհայ(ր)ն իւր Վարդան եւ զմայրն իւր Ղադամ, եւ զեղբայրն իւր Վարդան, եւ զքուրն իւր Ըսթէ եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զՍախաթան, եւ զՍէվիլի, զՈխաթան, զՓիրաթան, զԱղաջան, զԱմիրջան, զԱւաֆար, զԴմախաւայ, զԱխեջան, Քահնափուշ, Ամնադին, զԱրնալ, Ասուզան, Փէրիխան, Թուրուանդայ:

Արդ՝ աղաչեմ զամենեւեան, որք հանդիպիք սրմայ տեսութեամբ կամ աւուրութեամբ ինչ իւրք, կամ արինակեօսով, յիշեցէք ի միտս բարի եւ ի հայրածս պատկանաւորս: Զստացող լուսազարդ տառիս զՏիրանանց, Վարդանայ դուտոր, զկողակիցն իւր Ղադամ յիշեցէք ի բարի:

Եւ զիս՝ զբաղմամեղ եւ զանարհատ գրիչս զՅովսէփ յիշել աղաչեմ, որ շատ նւ բազում աշխատեցայ ի գրելն սորայ: Բայց սխալանաց եւ խոշորութեան սորա անմեղադիր լեռուք, վասն զի կար մեր այս է: Այլ եւ զդպիրքս՝ զՍպարաբէն, զՄկրտիչն, որ զթուղին կոկեցին, յիշել աղաչեմ, զՏէր ներսէս կոչսակրանս բաբոյան, որ շատ աշխատեցաւ ընդ նմին, եւ զխամեղ Վելին, որ զստակն ապասպարեց, յիշել աղաչեմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 302բ.— Փառք ամենայ սուր Երրորդութեանն... Արդ ես Տիրանս զնեցի զգանձայտաւորս Ճ (100) թանկայ յիշատակ ինձ եւ ծնողաց փոց՝ Վարդանին, եւ Ղատամին եւ դստերացն իմոց՝ Ասուզանին, Փարիխանին եւ Մրաթինն Եւ զփեսային իմ՝ զՔահնափուշն, եւ զուսա Ախիջանն, եւ զՊուտաղն, եւ զհոգոյ ւրդին իմ՝ ըզուստ Աթուշանն, եւ զԹոննեռն իմ՝ զՄարի խաչայն, զԱբրայունն, զՍաւաչան, զՂուլիչանն, զԱմնադինն, զԷնաչն, զՍաւթանն, զՓաշա խաթունն, զՄաղթում փաղէն, զՍաւթան խանն, զՄախիջան խաթունն, զԱսիջան խաթունն, եւ Սինաբա-

րիմն, զնուլու խաւայ, զՓիրուզ բաղուն, զԷնամ փաղէն, ամէն:

Թ. 303ա.— Յիշեցէք ի Քրիստոս զեկեղեցոյ միաբանքս՝ զՏէր Մարգարէն, զՏէր Մխիթարն, զՏէր Պօղոսն, զՏէր Մաթէոսն, զՏէր Ներսէսն, եւ ինձ Հակոբիս եւ Պաւղոս կազմողաց եւ զքերի դրողացս Յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր եւ վարդապետի իմոյ՝ Տէր Ազարիս քաջ փիլիսոփայի եւ մահաբախ Տէր Ստեփանոսին: Ի թերանով Աստուած ողորմի սասցէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն:

Նորոգեցաւ գանձարանս թոփն հայոց ՌժԱ.Ին (1562): Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ լուսեր)յամ դասջ բահնայից, յիշեցէ՛ք ի մաքրափայլ եւ յերկնագնաց յաղաթս ձեր զբարեմիտ եւ հեղահոգի զ(Տիրան)ս յիշատակ հոգոյ իւրոյ (և) ծնաւոյցն՝ հարւն Ղութու փաշին եւ մարն՝ Փաշաջանին, եւ կողակիցն իմ՝ Սուլթանաթունն, եւ որդին իմ՝ Տէր Մխիթարն եւ միւս որդին, որ հանդուցեալ է առ Քրիստոս՝ Անտոնն, եւ դստերքն իմ՝ Սիրադուստն, Սազգարն, եւ թոռուքն իմ՝ Յովհաննէան, Գրիգորն, Անտոնն եւ զամենայն արեան մերձաւորսն՝ զհարսն իմ՝ Փարէզ խանն, զԷնադանիքն եւ զհանգուցեալսն յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի սասցէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն: Ռ.Կն (1616): Զվերջին ստացաւ սուր գրութեան զբարեմիտ Մխիթար քահնայն, յոր ստացաւ զսա հայաւ... (պատուով է):

№ 2

ՅՐԱ ՊԵՏՐՈՍԻ ԳԻՐԲ ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Թերթերը՝ 259:— Պրակներ՝ 22, ամեն մի պրակը 12 թերթից:— Մեծուրյունը՝ 20×15×4,3:— Նուրբ՝ սովորական թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ տպածո գարդագծերով: Կազմի առաջին երեսի վրա տպված է ճշգրտով. «Յիշատակ է պարոն Իսախանին, թիվն ՌՃԻԳ (1674):»— Ձեռագրի վիճակը՝ բավար:— Գուրյունը՝ երկարած:— Դատարկ դրքեր՝ 157բ.—162բ:— Տողերը՝ միջին հաշիվով 28:— Գիրը՝ նոտր:— Զարդագրեր՝ վերնագրերը կարմիր թանաքով, կան թիչ թվով լուսանցազարդեր: Սկզբնատուրը՝ թղթազրբով:— Գրիչը՝ Ոսկան:— Գուրյուն ժամանակը՝ ՌՃԻԲ (1673):— Պատվիրատուն՝ Իսախան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— «Գիրք Յաղագս Առաքինութեանց:— Զօրութիւն ելանէք ի նմանէ եւ բշխէք զամենեւեան...» (ԺԸ գլուխ):

Թ. 20ա.— «Յաղագս երից աստուածային առաքինութեանցն:— Յետ ասելուն յառաքինութեանցն հասարակաբար...» (Կ. գլուխ):

Թ. 163ա.— «Յաղագս յոսոյ:— Մընալ զմեզ վերադարձին ի յոյսն կենդանի ի յանթանամ ժառանգութիւնս...» (ԺԸ գլուխ):

Թ. 201ա.— «Յաղագս սիրոյ:— Գլուխ պատուիրանին սէր է ի սուրբ սրտէ...» (ԻԳ գլուխ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 19բ.— Որով արժանի արասցէ Տէրն ա-
նաքինութեանց զստացող սորա զբարեմիտն և
հեզահոգի Իսախանն և զծնողսն իւր սպի-
տակացեալ զգեստիւք վերանալ ի բարձունս
և հանգչիլ ընդ երամս սրբոցն, ամէն:

Ք. 200բ.— Ով հանդիպիք ի յա(յ)սմ տա-
նիս կամ կարդալով կամ օրինակելով, յիշե-
ցէք զըստացողս սորա հեզահոգի պարոն Ի-
ս(ա)խանն և իւր արեան մերձատրոսն, ամէն:

Ք. 259բ.— Կատարեցաւ գիրքս աստուա-
ծային առաքինութեանցս թվին ՌՃԻԲ (1673),
յամսեանն փետրուարի ԺԾ.ումն: Ի վայելումն
պարոն Իսախանին և իւր ծնողացն աղա Ձէ-
յինուն: Եւ իւր յամենայն արեան մերձատր-
ոացն յիշատակ յափտենից եղիցի: Որ ոք
կարդայ կամ օրինակէ, բերան մի հայր մե-
ղա ասէ, Աստուած իւրոց արքայութիւն պար-
պեւեցէ:

Մածկագիր՝ գրքի վերջում .

.
.
.
.
||| ||| || | ||| | ||| || |||

Վերծանվում է՝ ՈՍԿԱՆ ԳՐԻՉ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. պահպանակի 1ա.— Երանի որ ընթեռնու առա-
քինութեանց գիրքս և պահ(է) գմիտս:

Ք. 1ա.— Թվին ՌՄԽԱ, դեկտ. Ը.ումն, Բանդար
Բոսթան. Քրիստոսի ծառայ Մարկոս որդի իմ Յակոբ-
ըան...:

№ 3

ԱՊՏԻ ՌԱՀՄԱՆԻ ԹԷՊՐԻՉԵՑԻ
ԲԱՆԱԼԻ ԱՍՏԻՂԱՅ

Քերբեր՝ 177:— Պրակներ՝ 13, յուրաբանչուրը
2 թերթից:— Մեծուրյունը՝ 17,1×11,5×2,2:— Նյու-
րը՝ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ:— Պահ-
պանակներ՝ հասարակ թղթից, 1-ը առջևում, 2-ը
վերջում:— Վիճակը՝ բավարար:— Գրույունը՝ միա-
սյուն:— Դատարկ քերբեր՝ 112ա—129բ:— Տողերի
քիվը՝ միջին հաշվով 23:— Գիրը՝ նոտր:— Զարդա-
գրույունը՝ վերնագրերը կարմիր թանաքով:— Գրիչը՝
Գեորգ դպիր:— Գրչույրյան ժամանակը՝ 1768 թ.:

ԲՈՎԱՆՄԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք. 1ա.— Այս գիրք բանալի աստեղաց:
Թարգմանեալ ի պարսկականէն մեղուաջան
աշխատութեամբ Գէորգայ շնչին դպրի բնիկ

տեղեալ Կոստանդնուպօլսեցոյ, ընդ հովան-
եաւ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցոյն Հա-
յոց որ ի Պալատ: Յամի Փրկչին մերոյ
1768-ի, յաւուրս փրկագործ պասքային: Այս
է երկրորդ օրինակ: Եւ որ յետ այսորիկ գրի-
ցի՝ լինի երրորդ օրինակ, և զինի այնք՝ շոր-
րորդ օրինակ. և սյապէս զինի հետեւալքն
զայս կանոնս պահեսցեն:

Ք. 2ա.— Յառաջարանուրյուն.— Արդ ծա-
նիր, զի առն համատարիկս է, զոր այս տկար
Ապտիւ Ազիզ, որդին Ապտի Ռահմանի Թէպ-
րիզեցի հասաքեալ է յաղագս գիտութեան
աստեղաց, և վասն գրքիս անունն եղեալ է
Բանալի Աստեղաց, որպէս զի արդինատրիլ
զայս գիտութեանս դիւրին լիցի հետեւողաց:
Յաւուր շարաթու ի սկիզբն ճէմադիւ եվէէլ
ամտոյն ի թուականի եօթն հարիւր քառասուն
ամի հիճրէթին և բոլոր այս գիրքս ի վաթ-
աուն պրակս տրամատեալ է: (Կ գլուխ):
Վջ. 60բ:

Ք. 61ա.— Հավիլված աստղաբաշխական
առանց խորագրի: Սկ. «Եւ ևս տեղեակ լեր
զի երեւակն յիւրաբանչիւր կենդանակերպի
երկու տարի և կէս լինի...» (ԺԲ գլուխ):
Վջ. 79ա:

Ք. 82ա.— «Այս մատեան վասն միւզանդա-
րաթի ուլայի դայիրէին: (Յուլյուֆ էֆենդի
զադեի):— Այս մատեանս բացայայտէ...»:
Վջ. 103բ. «...Աւարտեցաւ մատեան միւզան-
դէրաին: Շարադրող քրքոյս Եռախի էֆեն-
դի զատէն է»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 80ա.— Յիշատակարան:— Փառք և: պա-
տիւ ամենասուրբ երրորդութեանն. որոյ օգչ
նականութեամբն գաղափարեցաւ պատուս-
կանագոյն գիրքս, որ կոչի (Բանալի Աստե-
ղաց), ի վայելումն Կեսարացի Մահտեսի
Յակոբին: Յամի ներմարմնութեան 1773.ին և
յամսեան հոկտեմբերի 4.ին, ձեռամբ Գէոր-
գէոս շնչին դպրի, ի փառս Աստուծոյ և ի օ-
գուտ ընթերճասեր եղբարց, ամէն:

№ 4

ՍԻՄԷՕՆԻ ԳԱՌՆՈՒՅ ԱՐԱՐԵՍԱ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՅ ՊՐՈՎԿԻ

Քերբեր՝ 195:— Պրակներ՝ 25, յուրաբանչուրը
բաղկացած 8 թերթից:— Մեծուրյունը՝ 17×12×2,6:—
Նյուրը՝ հասարակ թուղթ:— Կազմը՝ մուգ կարմրա-
գոյն, կաշեպատ տախտակ, տպած զարդարանքնե-
րով:— Պահպանակներ՝ 3 թերթ հասարակ թուղթ:— Վի-
ճակը՝ բավարար:— Գրույունը՝ միասյուն:— Տողե-
րը՝ 19:— Գիրը՝ նոտր:— Զարդագրույունը՝ վերնա-
գրերը կարմիր թանաքով: Տեքստերի սկզբում գլու-
խատուերը կարմիր թանաքով զարդագրված:— Գրի-
չը՝ Մատթեոս:— Ժամանակը՝ 1771 թ.:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.—Ցանկ Գրոց Պրոկղի:

Թ. 4ա.—Սիմէօնի Գառնույ Յպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն Գրոցն Պրոկղի: (Ա—Մժ հատվածներ):

Թ. 193բ.—194ա.—Յիշատակարան քարգմանողի գրոցս.— Թարգմանեցաւ գիրքս Պրոկղի Դիադոսոսի Պղատօնական իմաստասիրի ձեռամբ Սիմէօնի անպիտան քահանայի եւ կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս ի յերկիրս Հայոց, ի վանս վրաց, որ կոչի Պղնձահանք, ի յաւիտեանից թուականին վեց հազար եօթն հարիւր ՄՁ թովին: Արդ՝ աղաչեմ գձեզ ո՛վ եղբայրք, ներել ինձ, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի. նախ՝ զի ոչ էի արժանի այսպիսույ սպասաւորութեան, սակայն շաղախեալ գոլոյս մեզօք: Երկրորդ՝ զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաշաց, և մտաց եւ ի զօրութենէ, զի զվազսուն ամենօք էի: Իայց զի ո՛չ էր թարգմանեալ սա ի մեր լեզուս, յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս լինիցի սա յազգէս մերմէ: Արդ, աղաչեմ, որք ընթեռնուք եւ կամ օրինակէք, յիշեալք յաղօթ զիս, եւ զիմ փոքր բանս գրեսցիք զկնի. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Թ. 194ա—195ա.—Բան առ ընթերցողս.— Իրտասցիք եւ զայս վերջապէս, սիրելի՛ք իմ ուսումնասէր եղբարք, զի այս գրոցս Պրոկղի, յետ ժամանակաց, Յամբելախօսս կոչեցեալ Եպիսկոպոս ոմն արարեալ էր զլուծմունս նախապէս: Եւ յետոյ, ի թուականութեանս հայոց հազարերորդի ուսումնասէր քահանայ ոմն Սիմէօն անուն, թարգմանեալ է զսա հանդերձ լուծամբն Յամբելախօսին ի վրաց լեզուէ ի հայ լեզուս: Իսկ ի հազար հարիւր թուոյն մերում Ջուղայեցի Սիմէօն գերիմաստ վարդապետն, որ էր եպիսկոպոս Գառնույ, վերբարտին արար սմա զնոր լուծմունս պարզ ոճովս, որք ի նաւարտս իւրաքանչիւրոց պրակաց բնաբանիցն եղեալք կան: Նաեւ տոյնոյ վարդապետիս է արարեալ զքերականութիւնն, զտրամարանութիւնն ըստ լեզուիս հայոց, նաեւ զայն, որոյ յսկզբանն սսէ. Եւ բառքն ասելիք են այսոքիկ, թերեւս եւ զայլ բանս: Բայց այս վարդապետս, ըստ շնորհաբուլխ մտաց իւրոց, ի մեկնելն զգիրս զայս, յուրեք յուրե(ք) ոչ է այնքան հոգ տարեալ զբառից եւ զբանից ըստ շարադրութեանն, զորս իբր դիւրիմաց գոլ վարկելով զանց էր արարեալ:

Այլ եւ ի յուրով տեղիս բազում սխալմունք եւ աղճատմունք ես էին ներմուծեալք ի գիրս յայս ի յանհմուտ գրչաց եւ յօրինակաց վասն խրթնամիտ շարագրութեանն: Յորոյ պատճառ է որքան յայս գիրս յառաջանային անտեղե-

կութիւնք եւ կորուստ մտաց բանիցն: Վասն որոյ, ես, յետինս ի բանասիրաց Սիմէօն վարդապետս յերկրէն Այրարատու, ի քաղքէն Երեւանու, եւ միաբան սրբոյն էջմիածնի ընդհանրականի աթոռոյն, գոլով իբր սիրահարեցեալ ի գրոցս յայսմանէ, ի թուականութեանս մերում ՌՃՂԹ (1750), ժողովեցի առ իս բազում օրինակս գրեցեալս ի հնոց եւ գրեցի զայս իմով ձեռնագրով, որ թէպէտ անսխալ միայն Աստուած է, նաեւ գիրս իմ յոյժ տգեղատես, սակայն յամենայնի ջանիւ կարի ուշադրութեամբ եւ մտաուութեամբ գրեցի: Նաեւ զոմանս բանս զանց եղեալսն ի սիմէօն վարդապետէն լուծեցի ըստ կարեաց իմոց եւ եղի յաւարտսն Սիմէօն վարդապետի լուծմանցն իւրաքանչիւր լուսանցան հանդէպ իմոց բանից սկզբանց գծագրեցի զխաչանշան գիծս, որովք որոշեցին բանք իմ եւ Սիմէօն վարդապետին: Ուրեմն, ի դնելն թուոց հանդէպ բնաբանից, եւ լուծ՝ հանդէպ լուծմանց Սիմէօն հեղինակին իմոյ, դնի եւ խաչ հանդէպ իմոց բանից:

Վասն որոյ աղաչեմ գձեզ, որք հանդիպեալք այսմ, հաւանիցիք, եւ օրինակել կամիցիք, գրեցէք եւ զիմ բանսն իւրաքանչիւրն տեղուշ, եւ նոյնով խաչանիշ գծիւն որոշեցէք, որովք յատկասցին իւրաքանչիւրքն եւ զիս հանդերձ իմայնօքն յիշեալք ի յաղօթս ձեր տալով զփառս տուողին ամենայն շնորհաց: Իսկ եթէ տչ հաւանիցիք իմոցն բանից, մի գրիցէք, սակայն մի մեղադրիցէք զմեզ իբր դատաւոր լինելով ի վերայ այլոց, զի մի է Տէր եւ դատաւոր ամենայնի: Որում փառք յաւիտեանս, ամէն:

Թ. 1ա.— Գրոցն Պրոկղի: Արարեալ ի Սիմէօնէ Գառնույ եպիսկոպոսէ յառաջագոյն ի ՌՃ (1651) թուականին մերում: Իսկ ի ՌՃՂԹ (1730) թուոյ մերում վերստին սրբագրեցեալ ի բազմաց հեղինակաց եւ ոմանց դժուարիմաց բանիցն եւս նորապէս արարեալ լուծմունս խառն ընդ առաջնոյն եւ ուրոյն նշանաւ տեսառն Սիմէօնի գերերջամիկ Հայրապետի Ամենայն Հայոց ի վարդապետութեան իւրում: Յորոց ձեռագիր հեղինակէն օրինակեցա՛կ գիրքս այս ի վայելումն նորին յետնեալ ծառայիս տէր Իսահակ մեղսակիր արեղայիս ի թուոյ Փրկչին ՌՉՁԱ (1771) եւ ի մերում թուոյ ՌՄԻ (1771) ապրիլ ամսոյ 2 (6), ի գերահրաշ Աթոռս Ամենայն Հայոց ի Սուրբ էջմիածին:

Թ. 165բ.— Զմեղաւոր Մատթէոս գրիչս յիշել աղաչեմ ո՛վ եղբարք:

Թ. 187ա.— Զերում ազնութեանդ պարտական ծառայ և տտից զմեղաւոր Մատթէոս սևազգեստ գրիչս յիշել աղաչեմ, աղաչեմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբից երրորդ պահպանակի շուռ տված երեսի վրա. «Գինեցի պարոն Կարապետ Բաղդասար Լիւմսիցն 12 ուսի, 8 անայ, 1883 թիւ 19 լունի(սի), Թանգուն, Հայրապետ դ(ի) Տնտեսին»:

№ 5

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՆՈՒՐԱՆ

Թերթերը՝ 284.— Պրակները՝ 15, յուրաքանչյուր պրակը 12 թերթից:— Մեծաբլուրը՝ 16,5×10,2×5,4.— Եյմբը՝ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ:— Պանկանակը՝ մի թերթ մագաղաթ, հին գոթական գրութեամբ:— Վիճակը՝ ոչ բավարար, ցնցակեր. կազմը փոքր ինչ քայքայված. վերջում մի քանի թերթ պակասում է:— Գրութունը՝ մինչև 130բ. միասյուն, իսկ այնուհետև՝ երկսյուն: Տողերը՝ միջին հաշվով 23:— Գիրը՝ նոտր, սկզբնատուները կարմիր թանաքով:— Գրութան քվակները՝ ՌՃՀԹ (1730):— Պատվիրատուն՝ Բարսեղ վարդապետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.— Ընդօրինակություն խաղի վանֆի արձանագրութեան.— «Այս է թագաւորն Վասակ, զոր կայ ի վանս խաղէի: Աստձաւ, ես Վասակ արքայ միաբանեցայ սուրբ ուխտիս խաղէի եւ միաբանքս տուին Բ(2) ժամ նոր Կիրակին. կատարիչքն օրհնին յԱստուծոյ, թուին ԶԿ (1311)»:

«Սկիզբն կամեցող եղև շինութեան գաւթիս, ես տկար նուաստոգի Յոհաննէս եպիսկոպոս կատարեցի բազում աշխատութեամբ, որք երկրպագէք, յիշէք ի Տէր. թուին ԶԻԸ (1279)»:

«Աւանետ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ, ամէն»:

Թ. 2ա.— Սիմէօնի վարդապետի Զուղայեցոյ արարեալ Քերականութիւն ըստ կեզուի մերում հայկազանց:— Քերականութիւն է գիտութիւն տառից եւ ասութեանց...»: ՎՉ. Թ. 69բ:

Թ. 70ա.— Անխորագիր, փոքր աղոթք: Սկ. «Քրիստոս Աստուած շնորհեաց եկեղեցեաց հաստատութիւն, քրիստոնէից անդորրութիւն...»: ՎՉ. Թ. 70ա:

Թ. 70բ.— Ընթերցուածս ի Դանիէլէ մարգարէէ.— «Յամին ութուասաներորդի, նաբուզոդոնոսորայ արքայի...»: ՎՉ. Թ. 73ա:

Թ. 74ա.— Անխորագիր, Ներսող՝ նվիրված Քրիստոսին, Մովսէսին, Դանիէին եւ այլոց: Սկ. «Իսկական էութիւն եւ անեղանելի գոյացութիւն, անսահման բարութիւն եւ ինքնաբաւական զօրութիւն...»: ՎՉ. Թ. 101բ:

Թ. 102ա.— Աւհնութիւն ժողովրդեան եւ շրջաբերականի: Սկ. «Ի դժուրեանց տեսան Աստուծոյ ամենակալէն եւ ի վերնական պետականէն, ի յեռանձնեայ աստուածութիւնէն...»: ՎՉ. Թ. 110բ:

Թ. 111ա.— Անխորագիր: Սկ. «Ամենասուրբ Հոգին, որ զարդարեաց զտիեզերս ամենայն, զարդարեաց էւ զձեզ, ի զարդ անկողովտեղի...»: ՎՉ. Թ. 113ա:

Թ. 113ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածանին, եւ Սրբոյն Յովհաննու Կարապետին, եւ Սրբոյն Ստեփաննոսի նախավկային...»: ՎՉ. Թ. 115ա:

Թ. 115ա.— Անխորագիր: Սկ. «Աչն անդական, բազուկն Փր(կ)չական, գութն արարչական...»: ՎՉ. Թ. 117բ:

Թ. 117բ.— Անխորագիր: Սկ. «Եւ որպէս օրհնեաց զԴաւիթ արքայ եւ զՍողոմոն եւ զամենայն բարեպաշտ թագաւորսն որ ի տանէն Դաւթի եւ յաղթող արար ընդդէմ Գողիաթու...»: ՎՉ. Թ. 118ա:

Թ. 118ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ ժողովրդապետն ամենայնի Տէր մեր Յիսուս Քրիստոս օրհնեացէ զառհասարակ ժողովրդականքը...»: ՎՉ. Թ. 119բ:

Թ. 119բ.— Անխորագիր: Սկ. «Արհնեալ է արարչազորձ Աստուած եւ շնորհաբաշխն ամենեցուն, անճառելին, անքննելին...»: ՎՉ. Թ. 122ա:

Թ. 122ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ որպէս Տէրն մեր ամենի զԱբրահամ ընտրեալ իւր սիրելի երկրցս հրեշտակօք ի խորանն նորա հանգանակի...»: ՎՉ. Թ. 126բ:

Թ. 126բ.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ մխիթարիչ Հոգին Սուրբ ճաճանչ Աստուած եղէն լուսովն, որ քաղցր բարձառ հնշմամբ ճառարգայթեցաւ ի սուրբ վերնատանն...»: ՎՉ. Թ. 129բ:

Թ. 129բ.— Աղօթք զոր կարդան ի վերայ հիւանդաց: «Տէր Աստուած, որ դժածդ ես եւ ողորմած...»: ՎՉ. Թ. 130ա:

Թ. 130ա.— Անխորագիր: Սկ. «Աղաչեմք զքեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ խնդրեմք առատ ողորմութիւնէ քումմէ...»: ՎՉ. Թ. 131ա:

Թ. 131ա.— Բառարան:
Սկ. «Աբրիաք Ա.
Աբարտովթ անշէն
Աբանայ հօր արհնութիւն
Աբարիմ անցք կամ անցանդօք...
Փարաւարացեալ գիրացեալ
Փարաւօն վան...» (Թերի):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թ. 1բ.—«Թուին ՌժՁԹ (1730) դեկտեմբեր, ի վախճան տիրացու եղիպարին»:
- Թ՝ 2ա. — «Ես Թոմաս վարդապետս ըստացայ սուրբ գիրքս քիմ հօրեղբոր որդի Հասանին թվին ՌժՁ-ին (1731) դեկտեմբերի եթ (22):
«Ես անարժան Հասանս գիրքեցի»:
«ՌժԺԱ (1711) վարդապ Սուրբ հաշին ձեռնադրեց Յոհաննէս վարդապետ Տէր հաշատուրն:

№ 6

ՅՈՒՍՏՈՒՊԻ

- Թերերը՝ 235:— Պրակները՝ 20, միջին հաշվով յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծուրյունը՝ 29,5×16×3,7:— Նյութը՝ սպիտակ թուղթ:— կազմը՝ կաշեպատ տախտակ, վրան զանազան զարդարանքներ տպված:— Պահպանակներ՝ 2 հատ աստղից՝ հասարակ թղթից:— Ձեռագրի վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ բարբեր՝ 196բ—198ա, 205բ—206բ, 210ա—211բ:— Տղերը՝ 27—28:— Գիրը՝ նոտր:— Վերագրերը՝ կարմիր թանաքով:— Ժամանակը՝ ԺԷ դար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1ա. — «Ցանկ վասն յուստոյապի աբարողութեան, յորում կայ այ(ս)քան ինչ»: ՎՉ. Թ. 6ա:
- Թ. 6բ. — «Բան առ իմաստաւենչ ընթերցողս...»: ՎՉ. Թ. 7ա:
- Թ. 8ա. — «Սկիզբն արացոյց Աստծաւ վասն յայտնութեան եւ իմաստութեան ստուղայի արուեստիս, որ է գործիք երկրաչափութեան եւ աստեղաբաշխութեան, որ է մեծ իմաստութիւն ուսումնասիրաց:— Դուռն ասաշին վասն ցուցանելոյ գործարանացն, որ կայ ի վերայ նորա» (170 գրուս): ՎՉ. Թ. 69ա:
- Թ. 69ա. — «Ցանկ ուստոյապի» (երկրորդ գրքի): ՎՉ. Թ. 70ա:
- Թ. 70ա. — «(Դ)ուռն առաջին որ իմանաս...» (65 գրուս): ՎՉ. Թ. 95բ:
- Թ. 96ա. — «(Ա)յս ի յայլ գրոց է փոխած. ի բան գալ ի բան...» ՎՉ. Թ. 130ա:
- Թ. 132ա. — «Ցանկ վասն ուստոյապի եւ աստեղագիտութեան»: ՎՉ. Թ. 133ա:
- Թ. 133ա. — «Դուռն առաջին վասն գիտելոյ երթփայ...» (51 գրուս): ՎՉ. Թ. 144ա:
- Թ. 145ա. — «Յաղագս աստեղաբաշխական իմաստութեան: Ուսումնասկան մտկացոյթիւն քառակի գաժանի...»: ՎՉ. Թ. 158բ:
- Թ. 158բ. — «Վասն ծագման եւ մտման աստեղաց: Մեծ հոգացողութենէ ճանաչել...»: ՎՉ. Թ. 166ա:
- Թ. 168ա. — «Ոմանք դենն յիւրաքանչիւ կլիմայ»: ՎՉ. Թ. 205ա:
- Թ. 207ա. — Հայտատո բյուրհերն աստղա-

բաշխութեան: Սկ. «Վասարիւստէմաիլէ մատգայի շիմայիլէ պուլաչտուղի պուճաք դըր...»: ՎՉ. Թ. 235բ:

№ 7

Մ Ա Շ Տ Ո Յ

Թերերը՝ 166:— Պրակները՝ 14, յուրաքանչյուրը 12 թերթ:— Մեծուրյունը՝ 17×14×4,3:— Նյութը՝ լավորակ հաստ թուղթ սպիտակ՝ քիչ դեղնած:— կազմը՝ կաշեպատ տախտակ, երկրաչափական գծերով զարդագծված:— Ձեռագրի վիճակը՝ բավարար: Սկզբից թերի—սկսվում է 12-րդ պրակից:— Գրությունը՝ միասյուն:— Տղերը՝ 21:— Գիրը՝ բորբոսագիր:— Չարագրութուն՝ խորագրերը կարմիր թանաքով: Կան կիսախորաններ, թռչագրեր եւ լուսանցազարդեր:— Գրիչը՝ Գրիգոր:— Գրչութեան ժամանակը՝ 1439 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1ա. — «Ձեռնադրութիւն քանակայից աստիճանաց...»: ՎՉ. Թ. 19ա:
- Թ. 19բ. — «Ձեռնադրութիւն: Յորժամ ի քահանայութիւն զոք կոչեն ի սարկուսագութիւնէ...»: ՎՉ. Թ. 40ա:
- Թ. 40բ. — «Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կատարի մահուամբ...»: ՎՉ. 133ա:
- Թ. 133բ. — «Յերկրորդումն աուր երթան ի գերեզման...»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 33բ.—34ա. (նկրքի լուսանցքում) «Արդ՝ ես Գրիգոր ծրող պրոյս, Յաղաթս ձեր ունիւմ մեծ յոյս. Արձակեցէք ցիս ի կապոյս, Որ իմ մեղացն է տարեկոյս: Եպիսկոպոս մեր նահանկոյս, Տէր եւ տեսուչ հարկան սեռոյս, Սուրբ քահանայք եկեղեցոյս, Եւ նորընծայք ի յայտ ժամոյս, Ոմնկն դրէք իմոյ խնդրոյս, Եւ մաղթեցէք առ Տէր Յիսուս, Որ ճարն նա է գլորեկոյս՝ Մաքոյ գհոգիս մեղաց տղմոյս: Իմ դեղն դուք խոցեալ հոգւոյս, Զի յիշեցէք անտարեկոյս, Յիշողքդ արհնիք յայսմ սրբոց եւ յեկեղեցոյս ամեն»:
- Թ. 165բ.—166ա. «.. Փառք հար համարուն, Համագոյ որդոյն, Փառակից հոգոյն, Որ ետ զարութիւն Եւ կարողութիւն, Հասոյց ի յաւարտ Այսմ համահաւաք Հայրապետածողով տառիս:

Նախ սուրբ խաչին և արհնութիւն:
 հաշարուայ զհետ նորին:
 Արհնեալ զչորն ի սրբութիւն,
 Եւ զաւազանն ի ծնողութիւն:
 Շարժեալ սեղան՝ պղծեալ տաճարին:
 Մկրտութիւնն մեզ ի քաւութիւն:
 Պսակ կուսից է արհնութիւն:
 Հաղորդութիւնն մեզ ի սրբութիւն:
 Աշխարհաթաղն է ազատութիւն:
 Եւ ալքնալացն է մխիթարութիւն:
 Եւ Բնարի, կարգ՝ կատարելութիւն:

Եւ այլ բաղմահ(ա)ւաք քան, զինչ որ
 խնդրես և պատշաճ է, կարգեցաք ի գիրքս
 յայս վասն յիշատակ հոգոց մեր ննջեցելոց:
 Գրեցաւ մաշթոցս ձեռամբ անյարմար Գրի-
 գորի և արժան (բնագրում ալսպես, ևժան ի-
 մաստով) ծառայի, առհասարակ մեծի և
 փոքու, որ էր թիւն հայոց ՊՃԶԸ (1439), ի
 դռն և ի նեղ ժամանակի, վասն ծովացեալ
 իմոյ մեղացն: Որք վայելէք զմաշտոցս, և
 մեր ծնողացն և մեր երախտատրաց թողու-
 թիւն խնդրեցէք ի բարեբարէն Քրիստոսէ և
 զձեր թողցէ՛ք ամենակարողն Աստուած և
 նմա փառք յաւիտեանս ամէն:

Զվերջին ստացաւ(ղ) զԱստուածասէր
 զհասատարիմ՝ ամենայն արհնութեանց...»
 (պատուվել է թերթը):

№ 8
ՄԱՇՏՈՅ

Թերթերը՝ 125:— Պրակները՝ 13, յուրաքանչյուրը
 10 թերթից:— Մեծուրյունը՝ 22×15,5×3,5:— Նյութը՝
 հասարակ թուղթ, քիչ գեղնածո:— Կազմը՝ կաշեպատ
 տախտակ:— Ձեռագրի վիճակը՝ առաջին երկու թեր-
 թերը վնասված, անընթեռնելի ժԱ-րդ պրակի 4-րդ,
 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ թերթերը պատուված են:
 Առաջից և վերջից որոշ թերթերը ցեցերը ծակծկել են:
 — Գրուրյունը՝ միասյուն:— Տողերը՝ 19—21:— Գի-
 րը՝ բուրգգիր:— Զարդագրուրյունը՝ կան 5 կիսախորան-
 ներ (թ. 1ա, 23ա, 49ա, 73ա, 81ա) և 5 լուսանցա-
 զարդեր (թ. 23ա, 49բ, 73ա, 79ա, 81բ): Հատվածների
 ստաջին քառերի սկզբնատաները զարդանկարված են:
 Կիսախորանները և զարդանկարները անվարժ նկարչի
 գործեր են: Զարդանկարների մեջ գործ են անված
 սրճազուլն, կարմիր և սև գույները:— Գրիչը՝ ան-
 հայտ:— Գրուրյան ժամանակը՝ 1711:— Պատվիրա-
 տուն՝ Իշխանցի Խոճա Պապի փին Մարգարիտը:—
 Գրուրյան վայրը՝ Սեբաստիա:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 125բ.— Փառք Ամենայտուր Երրորդու-
 թեանն... Արդ՝ աւարտեցաւ գիրքս, սր կոշի
 մաշտոց, ի փառս ամենամեծին Աստուծոյ, ի
 հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տեառն
 Աղեկսանդր կաթուղիկոսի, ի թուականու-
 թեանս կենարարին ՌԷԺԱ (1711), ի հայոցն
 ՌՃԿ, յունիս ամսոամն Ժ և Ը (18): Գրեցաւ

յի մաշտոցադան Սեբաստիայ, ի դռն Սուրբ
 Սարգիս եկեղեցոյն:

Յիշա(տա)կ է մաշտոցս Իշխանցի Խոճա
 Պապին կնոջն՝ Մարգարիտին և միւս հան-
 րուցեալ կնոջն՝ Մէլէքին և իւր որդոցն՝ Աս-
 լանին, Եղիային, Տանիկին, Սարգիսին,
 Խաչատուրին, դստերացն՝ Աննային, Մար-
 թային և իւր հօրն Սինանին և մօրն Մար-
 թային:

Տէր Աստուածն ամենայնի կենդանեաց ա-
 րեւատութիւն պարգեւեացէ, ննջեցելոցն մե-
 ղաց թողութիւն և յերկնից արքայութիւն
 պարգեւեացէ և անթառամ պսակին արժանի
 արացէ, ամէն(ն): (Այստեղ ընդհատվում է
 հիշատակարանը):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 125ա.— «Ի գուղըն Քամզարայցի Մուսղի
 տէր Կարապետին, յիշատակ է հօր կամ մօր հոգուն,
 Թուին ՌՔՃՄՐ.ին (1803) հոգաբերի Գ.ին:

№ 9

ԱԻՏՏԱՐԱՆ

Թերթերը՝ 236:— Պրակները՝ 20, յուրաքանչյուրը
 12 թերթից:— Մեծուրյունը՝ 26×19×7:— Նյութը՝
 գեղնած հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ,
 սպածո զարդարանքներով: Առաջին նրբնի վրա կա
 արծաթյա փորթիկ խաչ, վրան Հիտտաի խաչելու-
 թյամբ:— Ձեռագրի վիճակը՝ բավարար:— Գրուրյու-
 նը՝ երկսյուն:— Դառաղի բրդեր՝ 68բ—69ա:— Տո-
 դերը՝ 28:— Գիրը՝ բուրգգիր:— Զարդագրեր՝ ունի
 շորս ավետարանիչների նկարները, շորս կիսախորան-
 ներ և բազմաթիվ լուսանցազարդեր:— Գրիչը՝ հաշա-
 տուր:— Գրուրյան վայրը՝ Արտափել:— Գրուրյան
 ժամանակը՝ ՌՂԴ (1645):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ


Թ. 235բ.— Փառք ամենասուրբ Երրորդու-
 թեանն... որ արժանի արար գնեխեալ մե-
 ղաւք և զանարհեստ և զանարժան, հաշա-
 տուր զրիչ սուտանուն քահանայ հասանել ի
 վերջին գիրս արբոյ աւետարանիս: Ի թուա-
 բերութեան հայկազեան տաւմարիս ՌՂԴ
 (1645), ի քաղաքն Արտաւել: Արդ, երես ան-
 կեալ աղաչեմ զընթերճողքս սուրբ աւետա-
 րանիս և զհանդիպողքս յիշել ի մաքրափայլ
 յաղաթս զիս՝ զանարժան գրիչս և զձնաւղսն
 իմ, զի բազում աշխատութեամբ և ջանիւ
 զժագրեցի սուրբ աւետարանսս...

(Այլ ձեռագրով) Ասատուրն և ամենայն
 յարեան մերձաւորք յիշեցէք և ողորմի ա-
 սացէք, ամէն:

Թ. 68ա.— Զսակաւ ծրող սուրբ աւետարա-
 նիս, զհաշատուր սոտանուն յիշեցէք ի
 Քրիստոս:

Ք. 111ա.— Զանարհեստ եւ դանարժան ծրոզս խաշատուրս՝ սուտանունն քահանայ, եւ զծնողս իմ յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի առհասարակ, ամէն:

Ք. 69բ.— Մածկագիր



Թէ դպիր ես կարդա, թէ ոչ վզիդ արա եւ հաղա:

Աղալաղալած կարդացվում է՝ «Տխեծ գրիչս յիշեալ»:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 1ա.— Որ ողորմի ստացողի գրոցս, զբարեմիտ եւ զհեզահոգի Ասատուրն, հայր իւր Փօլատն, եւ մայրն հանսուլթանն, եղբայր Մուբալիւն, եւ ըւրն թուրվանդէն, եւ կողակիցն Աղիզն, եւ որդիքն, Մարգիսն, եւ կողակիցն Սառնն, եւ որդիքն՝ Առաքիչն, Կիրակոսն, եւ Մարգարէն, եւ դստերն Վախէն, Մայրանն, եւ միւս որդին Փօլատն, եւ կողակիցն Հաբոցն (1), եւ որդիքն Ալվազն եւ Պարսամն, և դստերը Ասատուրի Գայրան Սանդուլթան, Թուրվանդէն և հանաուլթանն եւ հանգուցեալ որդիք Քաթոսն, Գալուստն, Մարտիրոսն, Ընդստակէսն, եւ դու(ս)ար Վառվառն, եւ յամենայն յարեան մերձաւորը յիշեցէք եւ ողորմի անացէք նոցա, եւ Աստուած ձեզ ողորմի իւր արքայութեանն, ամէն:

Յիշեալ զղպիր Մուրատս եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն:

Ք. 2բ.— Յիշատակ է սուրբ անտարանս, որ ես Տէր Յարութիւնի որդի Անիկեցի Տէր Գրիգորս, եւ ըսյուն իմ Խոսրով, եւ փեսայն իմ Մարգիս, զի մեր Խոսր զայս անտարանս ի դուռն Սուրբ Վուսաւորչին Խոր Վիրապայ, ձեռամբ առաջնորդ Ներսէս վաղապատին, յաւիտեան յիշատակ հոգոց եւ ամենայն ն(ն)չեցելոց մերոց: Եւ որ զսա անտի հանցէ եւ ծախուցէ, առաջի ատեանին Քրիստոսի ամօթապարտ լիցի աստ եւ ի հանդերձեալն, ամէն:

Ք. 3ա.— (Նախորդ ձեռագրով) Թուին ՌՄԿԷ (1818) յունուարի մէկն: Ի վերայ սրբոյ անտարանիս եղեալ փաթութեան շարժութեան, որը են Գ (4) հատ շուշթայ եւ Գ (3) յուժ մանր խաչը:

Ք. 68բ.— Ես, տիրացու Գրիգորըն, թվ. 1876 Ներսէսըն վարդապետիցըն Աստուծով շատ շնորհք վեր կայանք ՌՄՉԶ(1):

Ք. 183ա.— Յիշատակ է սուրբ եւ ընտրեալ սուկ հատընտիր եւ իստակ սուրբ անտարանս մուսուլմանց ընէս Ղազարին եւ որդոցն՝ պարոն Շահպաղին, Ասվատուրին եւ թոռանցն Սիւօին, Մաժըմին, Մանուկին, Շահինին, Զալապուն, Մանասին, Շահբարամին, եւ հարսն Գուհարին, Քամամին, Խիսալին եւ թոռնիկին, Գուլպայեաղին, Նուպարին, Փարուն, եւ որք առին զսուրբ անտարանս եւ ետուն անընչի յիշատակ Մուսուլմա սուրբ Յակոբ կոչի: Որ եւ վարեպաշտ եւ երկուրաց Ղազարն, եւ Կենսակիցն Գուլումն, եւ ի հաղալ

ընչիցն ետուն որ եւ մնալ յիշատակ յաւիտենից... Օլ սուրբ եկեղեցու քահանայք եւ մանկունք, խնդրեմք եւ խղաղեմք, որ մէկ հայր մեղայի յիշէր ընես Ղազարն, եւ ուղերթն եւ դստերն, եւ դուք յիշեալ լինիլիք Յիսուսէ Քրիստոսէ մերմէ, ամէն:

Ես կրկին պարոն Ալվազն եւ կողակիցն իւր Մարիամն, եւ որդոցն՝ Խաչոին, Շահնազարն, Ղարիպանն, եւ այլ ամենայն մեծ եւ փոքրն, եւ դարձեալ Պետրոսն, եւ իւր կենակից Մահպուտն, եւ որդիքն՝ Ալամշէն, Ասլամն, Յարութիւնն, Մահրատն, Մարուսանն, և սոցին հին եւ նոր նընչեցելոցն ողորմի ասա(ւ)դացն Աստուած ողորմեսցի, ամէն: Հայր մեր...

Ի Տէր Կիրակոսէ ծրեալ ՌՃԶԳ (1734) թվին ունվար ԻԶ (26):

Ք. 154բ.— Սուրբ Յովհաննէս անտարանիչն է: Ես զրեցի Յովհաննէս նուստս վարդապետս դպիր Վարդանին ի 1899 ամի յունիսի 24ն: Աշտարակեցի ի Ս. Վ. Լ.:

№ 10 ԱԻՅՏԱՐԱՆ

Քերթեք՝ 308.— Պրակեքը՝ 27, յուրքանչյուրը 22 թերթից: Մեծուրյունը՝ 17×13,2×6.— Կազմը՝ կաշեպատ տախտակ, ներքից փակցրած է կտոր՝ սպված կարմիր զարդերով: Գրուրյունը՝ նրբայուն: — Պանպրակեքը՝ հասարակ թղթից: Վիճակը՝ բավարար: Դատարկ քերթեր՝ 87ա—88բ, 234ա—235բ:— Տղերի քիվը՝ միջին հաշվով 20:— Գիրը՝ բարդգիր:— Զարդագրուրյուն՝ ունի ավտարանիչների նկարները, խորաններ և վրասխորաններ: Կան բազմաթիվ թանաքեր և զարդաքեր:— Գրուրյան ժամանակը՝ ՌՃԻԱ (1672):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 307բ.— Աղպրից թերի է: Եւ միասնակաւ անբաժանելի սուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Արդ, շնորհօք Սուրբ Հոգոյն աստուծոցաք զսուրբ անտարանս ի յերկիրն Շօշ, որ ասի Ասպահան, ընդ հովանեալ սուրբ Ամենափրկչի, ձեռամբ յոգնամեղ Մկրտիչ քահանայի, փ հայրապետութեան տեառն Յակոբի խարաղվեաց կաթողիկոսի եւ ի հովուապետութեան Տէր Դաւթի Ջուլայեցոյ արհնպիսկոպոսի և քաջ բարոմնապետի հեղահոգի աստուածաբան վարդապետի, ի թուականին հայոց ՌՃԻԱ (1672) ամին, ի թագաւորութեան պարսից շահ Սուլէյմանին, ի խնդրոյ բարեմիտ եւ երկիւղած...» (վերջը թերի է):

ՇԱՆՈՒՌՈՒԹՅՈՒՆ

Հիշատակագրութիւններից երեւում է որ ձեռագիրը 1920 թվին պատկանել է Աղեքսանդր քահանա Հակոբյանին, որը քնել է Ջուլայեցի Հակից (8) ութը ղաճկի Քողեղ է հիշատակագրութիւններ թ. 1բ—3ա, 85բ—87ա, 233բ—234ա էջերում, ուր խնդրում է հիշել իր ընտանիքի անդամներին, բարեկամներին և ազգականներին:

(Շարունակելի)